

## ՎԱՂ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԵՄԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ԱՐԴԻ ՓՈԽՈՒՄ

Անկախացումից հետո Հայաստանը արմատական փոփոխություններ ապրեց կյանքի բոլոր ոլորտներում, ինչը պայմանավորված էր նախ և առաջ Խորհրդային Միության փլուզմամբ: 1991 թ. Հայաստանը, հռչակելով իր անկախությունը, հիմք դրեց սոցիալական, իրավական պետության ստեղծմանը և շուկայական տնտեսության զարգացմանը: Այդ գործընթացը ընթացում էր դժվար և դանդաղ, քանի որ կենսագործունեության բոլոր ոլորտները փոխվում էին միաժամանակ: Տեղի ունեցող փոփոխությունները մեծապես ազդեցին հասարակության թե՛ սոցիալական, և թե՛ ինստիտուցիոնալ կառույցների գործառնության վրա՝ նրանց առաջադրելով գործելու նոր պայմաններ և պահանջներ: Փոփոխություններից զերծ չմնաց նաև հայ ընտանիքը:

1988 թ. աղետալի երկրաշարժն արդեն իսկ հազարավոր ընտանիքների կանգնեցրել էր սոցիալ-տնտեսական դժվարությունների առաջ՝ զրկելով նրանց բնակարաններից և ապրելու համար անհրաժեշտ նվազագույն միջոցներից: Վիճակը բարդացրեց նաև Լարաբադյան պատերազմը, որը պահանջում էր ուժերի և ռեսուրսների զերկարում, ինչպես նաև խաթարում էր պատերազմի մեջ ընդգրկված կամ այս կամ այն ձևով դրա հետ առնչվող ընտանիքների (զինծառայողների, փախստականների, տեղաշարժված կամ սահմանամերձ գոտում ապրող ընտանիքների) կյանքի բնականոն ընթացքը: Դրան զուգահեռ իրականացվող սոցիալ-տնտեսական և քաղաքական կարգերի փոփոխման գործընթացը, տնտեսության քայքայումը, զանգվածային գործազրկությունը, բնակչության արտագաղթը, սոցիալական ծառայությունների անմատչելիության աճը, հասարակության մեջ ստեղծված քառասյին վիճակը,

սոցիալական վերաճկողության մեխանիզմների հիմքերի թուլացումը առաջ բերեցին համընդհանուր արժեզրկում, տասնամյակների ընթացքում մշակված վարքային կարծրատիպերի խարխուլում և ընտանիքի անպաշտպանվածության ու օտարացման զգացում: Այս ամենը մեծապես անդրադարձավ ընտանիքի ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ խմբային ֆունկցիաների իրականացման վրա: Մասնավորապես, ընտանիքը՝ որպես առաջնային սոցիալականացման ազենտ և ամձի ձևավորման կարևորագույն ինստիտուտ էապես գիջեց իր դիրքերը, մինչդեռ մանկության հիմնախնդիրներով զբաղվող հետազոտողները գտնում են, որ ծնողական դաստիարակությունը կազմում է հենց այն կորիզը, որի շուրջը պատշաճ կեղև ձևավորելը արդեն ուսուցչի առաջադրանքն է՝:

Զնվազեցնելով վաղ տարիքի երեխաների պահանջմունքները բավարարելու գործում նախադպրոցական կառույցների դերը, այնուամենայնիվ հարկ է նշել, որ ընտանիքն է երեխայի սոցիալականացման առաջնային ազենտը, որտեղ դրվում են երեխայի ամձի զարգացման հիմքերը: Ընտանիքում երեխայի զարգացման հնարավորություններն առաջին հերթին պայմանավորված են ընտանիքի կողմից երեխայի պահանջմունքների գիտակցման աստիճանով: Այն ընտանիքները, որտեղ ծնողները գիտակցում են երեխայի պահանջմունքները, սովորաբար քայլեր են ձեռնարկում այդ պահանջմունքների, թեկուզ և սահմանափակ, բավարարման ուղղությամբ: Սակայն, միայն պահանջմունքների գիտակցումը բավարար չէ: Երեխայի պահանջմունքների բավարարման հարցում կարևորվում են նաև ընտանիքի հետ կապված մի շարք այլ գործոններ՝, մասնավոր-

<sup>1</sup> Տե՛ս Դուգլաս Ի. Փոուել, Ընտանիքները և վաղ մանկական ծրագրերը, ԱՄՆ, 1989, էջ 6:

<sup>2</sup> Տե՛ս Judith L. Evans, Robert G. Myers, Ellen M. Ilfeld, "Early Childhood Counts: A programming Guide on Early Childhood Care for Development", The International Bank for Reconstruction and Development / The World Bank, 2000, էջ 57:

րապես՝ ընտանիքի կառուցվածքը, ներընտանեկան մթնոլորտը (ընտանեկան կորիզի կայունության աստիճանը), ընտանիքի կենսապայմանները (ֆիզիկական, գյութական և այլն), ընտանիքի անդամների կրթական մակարդակը և ընտանիքի կրթական միջավայրը:

Ըստ այդմ, ներկա հոդվածում հարկ ենք համարում երեխայի պահանջմունքների գիտակցումը և դրանց բավարարվածության աստիճանի վերլուծությունը կատարելիս համաձայն ընտանիքի որոշ բնութագրիչների՝ կառուցվածքի, կայունության աստիճանի, անդամների կրթական մակարդակի, բնակարանային պայմանների, եկամտի և ծախսերի: Հոդվածում մեջբերված են հատվածներ 2002 թ. մայիս-հունիս ամիսներին Հայաստանի մարզերում «Վաղ մանկության զարգացումը Հայաստանում. վկայություն հետազոտման վայրից» թեմայով իրականացված գնահատող որակական հետազոտությունից<sup>1</sup>, մասնավորապես 48 աղքատ ընտանիքների հետ կայացած մանրակրկիտ հարցազրույցների արդյունքներից:

### **Ընտանիքի կառուցվածքը**

Հայ ընտանիքն ավանդաբար հարում է ընտանիքի ընդլայնված ձևին, որտեղ մեկ տանիքի տակ ապրում են մի քանի սերունդներ: Ընտանիքի այս տեսակը առավելապես բնորոշ է գյուղական բնակավայրերին: Ընդլայնված ընտանիքները, որոնք ներառում են տատիհ, պապիհ և այլ հարազատների, ունեն երեխայի պահանջմունքները բավարարելու ավելի լայն հնարավորություններ, քան ընտանիքի մյուս տեսակները:

*«Տատիկն է երեխայի հետ զբաղվում, քանաստեղծություններ է սովորեցնում»:*

*«Երբ գնում են աշխատանքի, երեխայիս խնամում է հայրս.կերակրում է, հետևում, որ վտանգավոր ոչինչ չանի»:*

*«Ես եմ թոռնիկներովս զբաղվում, ծնողները աշխատում են: Տանում են, տուն բերում մանկապարտեզից: Երբ հաճախում*

*էին երգի և պարի խմբակ, նույնպես ես էի տանում»:*

*«Ես երեք փոքր երեխա ունեմ՝ մեծը՝ երեք տարեկան, փոքրերը՝ զույգերը՝ ինը ամսական: Երեխաների խնամքի հարցում ինձ շատ են օգնում տալս և սկեսուրս»:*

Վերոհիշյալ մեջբերումները վկայում են, որ ընդլայնված ընտանիքներում երեխայի խնամքի և դաստիարակության հարցում մեծապես աջակցում են հարազատները՝ դրանով իսկ ապահովելով երեխայի ծնողների աշխատելու հնարավորությունը: Ընտանիքում տատի, պապի և այլ հարազատների առկայությունը նպաստում է նաև երեխայի կրթական, զգայական պահանջմունքների բավարարմանը, քանի որ այս դեպքում ընտանիքում երեխայի սոցիալականացման ազեմտների թիվը շատ ավելի մեծ է, իսկ եթե հաշվի առնենք նաև նրանց տարիքային տարբերությունները և կյանքի փորձը, մատուցվող գյութը կլինի շատ ավելի հարուստ:

Ինչ վերաբերում է *նուկեար ընտանիքներին*, պապ այստեղ երեխայի խնամքը և կրթությունը ընտանիքում ծնողների զբաղվածության պատճառով որոշ չափով դժվարանում է:

*«Ամբողջ օրը ես և ամուսինս աշխատում ենք: Ինձ վրա են ընկած և՛ տան հոգսերը, և՛ հողի, անասունների հետ կապված աշխատանքները: Երեկոները այնքան հոգնած եմ լինում, որ անգամ խոսելու ցանկություն և էներգիա չունեմ»:*

Հարկ է նշել նաև, որ հայ տղամարդկանց մեծամասնությունը, հատկապես գյուղական վայրերում, սահմանափակ մասնակցություն ունի երեխայի խնամքի և դաստիարակության գործընթացին: Այս խնդիրները ավանդաբար համարվում են կնոջ աշխատանքային ոլորտը:

*«Ամուսինս ամաչում է գրկել երեխաներին հարևանների ներկայությամբ: Ասում է՝ կմտածեն, որ ես, տղամարդ լինելով, զբաղվում եմ երեխաներով, և իմ տղամարդկային հեղինակությունը կընկնի»:*

<sup>1</sup> Հետազոտությունն անց է կացվել Գեղարքունիքի, Տավուշի, Սյունիքի, Վայոց Ձորի մարզերում և Երևան քաղաքում: Ընդհանուր առմամբ, հետազոտության մեջ ներգրավված են եղել 13 գյուղական և քաղաքային համայնքներ:

<sup>2</sup> Տե՛ս Report on “Early Childhood Development In Armenia: Evidence From The Field”, prepared by G. Tadevosyan, Save the Children, Step-By-Step Foundation, World Vision, Yerevan, 2002:

Բացի այդ, տղամարդկանց մեծ մասը այսօր, չկարողանալով կատարել ընտանիքի կերակրողի ավանդական դերը, գտնվում է հոգեկան ծանր ապրումների մեջ և հաճախ դիմում հոգեբանական փախուստի:

*«Մտուսինն աշխատանք չունի, ամբողջ օրը պարսպ է, սակայն երեխաների սոված հայացքները չտեսնելու համար հեռանում է տնից՝ իր նման գործազուրկ և իրեն հասկացող ընկերների շրջապատ, ուր լիցքաթափվում է թուղթ խաղալով»:*

*Ոչ լրիվ ընտանիքներում երեխաների պահանջմունքների բավարարումը շատ ավելի բարդ է: Աշխատող միայնակ ծնողը կամ երեխային տալիս է մանկապարտեզ և կամ էլ, մանկապարտեզի բացակայության դեպքում, երեխային տանում է իր հետ աշխատանքի:*

*«Ես ուսուցչուհի եմ աշխատում և երեխայիս տանում եմ ինձ հետ դպրոց: Երեխան ամբողջ օրը դպրոցի բակում թափառում է»:*

*«Ես երկու երեխաներիս (մեկուկես և չորս տարեկան) ոտքով տանում եմ կողքի գյուղ: Փոքրիկիս նստեցնում եմ հողի վրա և վարձու աշխատանք կատարում ուրիշի հողատարածքում, որ երեխաներիս գոնե հաց վաստակեն»:*

Փաստորեն, այն ժամանակը, որը երեխան պետք է օգտագործեր խաղալու, սովորելու համար, իրականում օգտագործում է «մի կերպ ժամանակը սպանելու» վրա, մինչև ծնողը կվերջացնի իր աշխատանքը: Պատահական չէ, որ ամերիկյան հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ամուսնալուծված և միայնակ մայրերի երեխաներն ապագայում ավելի շատ են զբաղված որակավորում չպահանջող աշխատանքային ոլորտներում, քան լիարժեք, երկծնողամի ընտանիքում մեծացած երեխաները<sup>5</sup>:

### *Ընտանիքի կայունության աստիճանը*

Երեխաների պահանջմունքների բավարարումը մեծապես կախված է ընտանիքի կայունության աստիճանից, այն բանից,

թե որքան հաճախ են փոփոխվում ընտանիքի մեծ անդամները տեղաշարժի, ամուսնական հարաբերությունների խզման և այլ պատճառներով: 1960-70-ականներին ամերիկյան հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ ակադեմիական գիտելիքների ձեռքբերման կարողությունների առումով երեխայի մասին կանխատեսումներում պետք է ընտանիքի անկայունության գործոնին ավելի մեծ տեղ տրվի, քան դպրոցի անկայունությամբ<sup>6</sup>:

Ներընտանեկան հարաբերությունների կայունության և ներընտանեկան մթնոլորտի հետազոտումն այսօր շատ արդիական է հենց հայ ընտանիքի համար, քանի որ վերջին տասնամյակում արտաքին մի շարք գործոնների ազդեցության հետևանքով դրանք էապես փոփոխվել են:

Չնայած այն բանին, որ Ադրբեջանի հայ բնակչության արտագաղթից արդեն անցել է ավելի քան տասը տարի, բռնի տեղահանվածության գործոնը շարունակում է ճնշող դեր խաղալ փախստականների կյանքում: Նրանք բնակություն են հաստատել նախկին արքեպիսկոպոսի գյուղերում և, իրենցը լիովին կորցնելով, մինչ օրս չեն կարողացել նորը վաստակել: Խղճուկ տները՝ առանց խոհանոցի և լողարանի, հին, ջարդված «կահույքը», անգամ պատտոված սփռոցը մնացել են նախկին տերերից:

Աշխատանք չունենալու, ինչպես նաև հարմարման և ինտեգրման մեխանիզմների բացակայության հետևանքով տղամարդիկ ստիպված լքել են իրենց ընտանիքները և մեկնել առավելապես Ռուսաստան: Իսկ կապի միջոցների թանկությունը և անմատչելիությունն էլ հանգեցրել են տղամարդու և ընտանիքի այլ անդամների միջև անգամ հեռակա հարաբերությունների խզմանը: Որպես արդյունք՝ բազմաթիվ ընտանիքներ կազմալուծվել են կամ դրա եզրին են:

*«Ես արդեն մի քանի տարի փորձում եմ գտնել ամուսնուս, սակայն ապարդյուն: Վերջերս ինձ լուրեր հասան, որ նա բարվոք ապրում է Հեռավոր Արևելքում և ունի նոր ընտանիք: Իսկ ես մնացել եմ անտեր՝ երկու նախադպրոցական տարիքի երեխա-*

<sup>5</sup> St'v Daria Pilling, Mia Kellmer Pringle, Paule Elek "Controversial Issues in Child Development", London, 1978, էջ 221:

<sup>6</sup> St'v Դուգլաս Ռ. Փոուել, նշվ. աշխ., էջ 6:

## Ճերը ձեռքիս:

«Ես չորս երեխա ունեմ՝ ինը, ութ, վեց և չորս տարեկան: Ամուսինս երեք տարի առաջ մեկնել է Ռուսաստան՝ աշխատելու, և մինչ օրս ես նրա մասին ոչինչ չեմ լսել:»

Կորստի, անկայունության հոգեբանական զգացումները որոշ դեպքերում խարխլեցին փախստական ընտանիքների արժեքային համակարգի միասնությունը: Ավանդական ընտանեկան հարաբերությունները առանձին դեպքերում կորցրել են իրենց արժեքը, ինչը հանգեցրել է տասնամյակներ շարունակ ընտանեկան հարաբերությունները կարգավորող կայացած նորմերի խախտմանը: Ի հայտ եկան ընտանիքներ՝ բաղկացած տարբեր հայրեր ունեցող երեխաներից:

«Ես ունեմ երեք երեխա տարբեր տղամարդկանցից: Փոքր երեխայիս հայրը որոշակի օգնություն է ցուցաբերում իր երեխային: Երեխաները դեռ փոքր են և չեն հասկանում ում է հասցեագրված այդ օգնությունը, սակայն ես մտավախություն ունեմ, որ երեխաներիցս միայն մեկի մոտ հոր փաստացի առկայությունը հետագայում բացասական կանդրադանոսն նրանց հարաբերությունների վրա, և մյուս երկու երեխաներիս մոտ կգոյանան որոշակի բարոյությունը:»

Նշված պայմաններում մեծացող երեխաները վտանգված են հետագայում վերարտադրելու դիտարկված վարքի և հարաբերությունների մոդելները: Երեխայի մեջ ոչինչ այնքան վառ չի տպավորվում, որքան իր ծնողների և քույրերի ու եղբայրների օրինակը: Բացի այդ, ընտանիքի անկայունությունը խոչընդոտում է երեխայի ադեկվատ սոցիալականացմանը, և հայտնի է, որ մեծ ընտանիքներից դուրս եկած երեխաները հետագայում ավելի հակված են շեղվող վարք ցուցաբերելու:

Այսպիսով, ընտանիքի մեծ բարոյահոգեբանական մթնոլորտը, երբ ապակազմակերպված է ընտանեկան խմբի կորիզը, հնարավորություն չի տալիս ապահովելու երեխայի պահանջմունքների բավարարումը:

## Ընտանիքի եկամուտը և ծախսերը

Երեխայի զարգացման հնարավորությունների վրա մեծապես ազդում է նաև հասարակության շերտավորման կառույցում ընտանիքի զբաղեցրած դիրքը, որը հիմնականում չափվում է վերջինիս սոցիալ-տնտեսական բնութագրիչներով: Ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը ենթադրում է երեխայի խնամքի, դաստիարակության և կրթության որոշակի պրակտիկա<sup>7</sup>:

Հետխորհրդային ժամանակաշրջանում արդյունաբերության կազմալուծման հետևանքով բնակչությունը ինչպես գյուղերում, այնպես էլ փոքր և միջին քաղաքներում ստիպված անցավ հողագործության և անասնապահության՝ օգտագործելով բնական փոխանակման մեխանիզմները: «Կենդանի» փողերը առկա են հիմնականում թոշակների և նպաստների տեսքով:

«Իմ երեխան ուտում է միայն այն մթերքները, որոնք աճում են մեր տնամերձ հողամասում, այն էլ միայն տարվա որոշակի ժամանակահատվածում: Մեծ դժվարությամբ և ոչ միշտ է հաջողվում երեխային ապահովել հացով և շաքարով:»

«Սեփական անասունների բացակայության պատճառով երեխա շատ հազվադեպ է կաթնեղեն օգտագործում, միայն երբ հաջողվում է փոխանակել ամուսնու կողմից բուժած ձկով:»

«Մեր բախտը բերել է, որ անտառը մոտ է, այն ապահովում է մեզ վառելիքով և որսով:»

Երեխայի պահանջմունքների բավարարումը սերտորեն կապված է ոչ միայն ընտանիքի եկամտի, այլ նաև «ծախսելու մշակույթի» հետ: Նայած թե ինչպես են ծնողները կառուցում երեխայի պահանջմունքների համակարգը, ըստ այդմ էլ կազմակերպում են ընտանեկան ծախսերը: Քանի որ ընտանիքների մեծ մասի եկամուտները խիստ սահմանափակ են, բավարարվում են միայն երեխաների ամենատառջնային պահանջմունքները, այն է՝ ֆիզիկական գոյության պահպանումը:

<sup>7</sup> Ст'ю Ю. А. Гаспарян, Семья на пороге XXI века: социологические проблемы, СПб., 1999, էջ 209:

<sup>8</sup> Ст'ю Philip E. Vernon, Intelligence and Cultural Environment, METHUEN&CO LTD, 1973, էջ 61:

Դրա հետ մեկտեղ ապակազմակերպված ընտանիքները (ալիոհոլիզմով տառապող, մարմնավաճառությամբ զբաղվող և այլն) անգամ սուղ միջոցները ծախսում են ոչ նպատակային:

*«Ամուսինն հարբեցող է, մեր երեք երեխաները օրերով հաց չեն ուտում, իսկ նա ընտանեկան նպաստի գումարից օդի և ծխախոտ է գնում»:*

*«Հարսս երեխային փոխանակ առջին անհրաժեշտության սնունդ, հագուստ և կոշիկ գնի, շոկոլադե կոնֆետներ է գնում»:*

*«Մեզ մոտ կան մայրեր, որոնք եկամտի հիմնական մասը ծախսում են իրենց արտաքին տեսքը ապահովելու (մազերի հարդարանքի, դեմքի շպարանքի, հագուստի) վրա, իսկ երեխաներին բերում են գիշերօթիկ մանկապարտեզ՝ զրկելով նրանց անգամ մոր ջերմությունը ամեն օր զգալու հնարավորությունից»:*

### **Ֆիզիկական պայմաններ**

Երեխայի արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ են ինչպես սոցիալական, այնպես էլ միջավայրային կամ էլ ֆիզիկական գործոնները<sup>1</sup>: Բնակարանի ֆիզիկական պայմանները՝ ջրի, զուգարանի և լոգարանի անբավարար վիճակը, մեկ սենյակում մարդկանց խտության աստիճանը, մեջասենյակի ու խաղերի համար տեղի բացակայությունը, երեխայի պահանջմունքների բավարարման կարևոր ցուցիչներ են: Գաղտնիք չէ, որ հայ ընտանիքների մի զգալի մասում երեխան չունի իր առանձին սենյակը, կամ էլ իր առանձին անկյունը:

Էլեկտրաէներգիայի թանկության պատճառով ջեռուցման այդ աղբյուրը բնակչության մեծամասնության, հատկապես գյուղական վայրերի համար, անհասանելի է: Ընտանիքները ստիպված են ողջ տարվա ընթացքում վառարան օգտագործել (ամառն ժամանակաշրջանում՝ կերակուր պատրաստելու համար): Վառելիփայտի պակասը դրդում է մարդկանց որպես վառելանյութ օգտագործել տարբեր վառվող նյութեր (տորֆ, հնացած ավտոդողեր և այլն), որոնք ծանրացնում են օդը և արտադրում առողջության համար վտանգավոր քիմիական նյութեր: Գյուղական տների (հատկապես աղքատ) գերակշռող

մասում գրեթե շնչելու օդ չկա, եղած ջերմությունը պահպանելու նպատակով տունը համարյա չի օդափոխվում, և երեխաները տարվա գրեթե կեսը, դրսում ցուրտ լինելու և սեզոնային հագուստի բացակայության պատճառով, գտնվում են այդ պայմաններում:

Իրավիճակն ավելի է ծանրանում, երբ ձմռանը մարդկանց խտությունը մեկ սենյակում հասնում է առավելագույնի: Ընտանիքի բոլոր անդամները, վառելիքի խնայման նպատակով քնում, սնվում, իրենց ազատ ժամանակն անց են կացնում միևնույն սենյակում:

### **Կրթական մթնոլորտ**

Ծնողների կրթական մակարդակը մեծապես ազդում է երեխայի կարիքների գիտակցման և դրանց բավարարման մակարդակի վրա: Այս հարցում հիմնականում աչքի էին ընկնում բարձրագույն կրթություն ունեցող անդամներով ընտանիքները: Հարկ է նշել, որ հատկապես մանկավարժական կրթությունը (թեկուզ և միջնակարգ մասնագիտական) այդ հարցում միանշանակորեն ազդեցիկ գործոն է:

Երեխայի համապատասխան զարգացմանը նպաստում է նաև դպրոցահասակ քրոջ և եղբոր առկայությունը: Սա նշանակում է, որ տանը կան գոնե նվազագույն չափով գրեական պիտույքներ, գրքեր:

*«Չորս տարեկան տղաս մանկապարտեզ չի հաճախում, բայց մեծ աղջիկս սովորում է 3-րդ դասարանում և երեխայիս սովորեցնում է տառեր, հաշվել և երգել»:*

Նույնիսկ այն դեպքերում, երբ նախադպրոցական երեխայի կրթությամբ հատուկ չեն զբաղվում, դպրոցահասակ երեխայի առկայությունը այնուամենայնիվ որոշակի դրական ազդեցություն է ունենում:

*«Երբ դպրոցահասակ երեխաս դաս է սովորում, փոքրս, որպես կանոն, հետաքրքրությունից ելնելով, պտտվում է նրա շուրջը և կրկնում այն բանաստեղծությունները կամ դասերը, որոնք մեծը սովորում է»:*

Երեխայի կրթական պահանջմունքների բավարարումը մեծապես պայմանավորված է տանը գրքերի և կարդալու այլ նյութերի առկայությամբ կամ բացակայությամբ: Հարկ է նշել, որ այսօրվա զանգվա-

<sup>1</sup> St'u Daria Pilling, Mia Kellmer Pringle, 624. աշխ., էջ 112:

ծային ջրավորության պայմաններում ծնողները գրեթե անտեսել են երեխաների համար նախատեսված գրքերի անհրաժեշտությունը:

*«Ինձ գրքեր պետք չեն, միևնույն է, ժամանակ էլ չունեն երեխաների համար կարդալու: Եթե փող լինի, գրքերի փոխարեն ավելի լավ է մեկ կգ շաքարավազ գնեմ, որ երեխաներս առավոտյան քաղցր թեյ խմեն»:*

Նախադպրոցական տարիքի երեխաների աղեկվատ զարգացման համար կարևորագույն դեր ունեն խաղալիքները, սակայն հետազոտության արդյունքները վկայում են, որ խաղալիքները, ծնողների կարծիքով, երեխայի պահանջմունքների համակարգում զբաղեցնում են վերջին տեղը:

*«Խաղալիքները շուտ են ջարդվում. մենք այդքան գումար չունենք անընդհատ գնելու համար: Իմ որդիները իրենք իրենց ձեռքերով են պատրաստում խաղալիքներ և բակում խաղում»:*

*«Լավագույն դեպքում երեխաներս ունեն մեկ խաղալիք. տղաները՝ պարզագույն փոքրիկ ավտոմեքենա, աղջիկները՝ տիկնիկ»:*

Զարգացնող խաղերը ընդհանրապես բացակայում են: Պետք է նշել նաև, որ բալային պայմանները նույնպես թույլ չեն տալիս երեխաներին ազատ խաղալ. չկան խաղահրապարակներ, տները հաճախ գտնվում են մայրուղիների վրա և ուղակիորեն սպառնում են երեխայի կյանքին:

Ժամանակակից տեղեկատվական հազեցածության պայմաններում հետազոտված ընտանիքների մի զգալի մասը չունեն աշխատող հեռուստացույց և ուղիորդում: Սակավաթիվ ընտանիքներում կար հեռուստացույց, սակայն դրանց մեծ մասը անսարք էր և ծառայում էր որպես կահույքի նմուշ: Երեխաները զրկված են մանկական զվարճալի և կրթական ծրագրերը դիտելու և ունկնդրելու հնարավորությունից:

*Մեր հեռուստացույցը վաղուց արդեն չի աշխատում: Հինգ տարեկան տղաս ծա-*

*մանակ առ ժամանակ գնում է հարևանի տուն և մեծ ուրախությամբ է դիտում մանկական ծրագրերը: Դա է պատճառը, որ տղաս չի ցանկանում տուն գալ»:*

Այսպիսով, հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ հայ ընտանիքների մի զգալի մասում բացակայում են անհրաժեշտ այն պայմանները, որոնք երեխայի սոցիալականացման կարևոր գործոն են: Գերիշխող պատճառների շարքում առաջինը, իհարկե, ընտանիքի աղքատ վիճակն է:

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ, ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, Հայաստանում բնակչության 50.9% աղքատ է<sup>10</sup>, ապա կարելի է միանշանակ պնդել, որ այսօր երեխայի զարգացման հնարավորություններն ընտանիքում շատ սահմանափակ են: Երեխաները՝ որպես սոցիալական խումբ, այսօր խոցելի են՝ ընտանեկան անբարենպաստ պայմանների, կրթական համակարգի խարխվման և կրթական հաստատությունների մատչելիության անկման պատճառով<sup>11</sup>: Այսպիսի իրավիճակում դժվար է կանխատեսել, թե զարգացման ինչ հեռանկարներ կունենա մեր հասարակությունը, քանի որ հետազոտությունները վկայում են, որ վաղ մանկության փորձը երեխայի կյանքում երկարատև ազդեցություն ունի, և ապագայում այն շատ դժվար է փոխել<sup>12</sup>: Այս ամենից հետևում է, որ պետությունը առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնի երեխաներին՝ նրանց մատուցելով որակյալ և մատչելի սոցիալական, կրթական և առողջապահական ծառայություններ, ինչը հնարավորություն կտա լրացելու ընտանեկան սոցիալականացման բացերը: Մանկության բնագավառում իրականացվող սոցիալական քաղաքականությունը, երկրում ընթացող սոցիալական փոփոխություններին զուգընթաց, պետք է ուղղված լինի վաղ մանկության զարգացման տարբերակված ծրագրերի մշակմանը և դրանցում ընտանիքի դերի շեշտադրմանը:

**Գ. Մ. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ**

<sup>10</sup> Տե՛ս «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. վիճակագրական վերլուծական զեկույց», ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2002: